ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հայաստանի Հանրապետություն, Երևան, 0009, Կորյուն 15, հեռ. (37412) 77 77 40, info@cpcarmenia.am

Koryun Street 15, 0009, Yerevan, Republic of Armenia, tel. (37412) 77 77 40, info@cpcarmenia.am

ՈՐՈՇՈՒՄ N 2026/4
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՈՒԴԻՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿՏՀԲՄԾ-2026/1 և ԿՏՀԲՄԾ-2026/2 ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ԲԱՑՄԱՆ ՆԻՍՏԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«16» մարտ 2026 թվական ք. Երևան

Աուդիտորական կազմակերպությունների ընտրության համար անցկացվող մրցույթների կազմակերպման և անցկացման մրցութային հանձնաժողովը, կազմով՝ Լուիզա Սարգսյանի, Տիգրան Ծատուրյանի և Ռուզաննա Առաքելյանի (այսուհետ՝ Մրցութային հանձնաժողով), ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 40.2-րդ հոդվածով, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի «Աուդիտորական կազմակերպությունների ընտրության կարգը, նրանց ներկայացվող պահանջները և աուդիտի իրականացման շրջանակները սահմանելու մասին» Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2022 թվականի հունիսի 17-ի N 02-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) Հավելվածի 11-րդ կետով, որոշեց.

1. «Թրասթ Աուդիտ» ՓԲԸ-ի կողմից ԿՏՀԲՄԾ-2026/1 և ԿՏՀԲՄԾ-2026/2 ծածկագրերով մրցույթներին մասնակցելու նպատակով ներկայացված մրցութային առաջարկներում առկա են անհամապատասխանություններ Որոշման Հավելվածի 39-րդ

կետի պահանջներին, մասնավորապես չեն ներկայացվել Որոշման Հավելվածի 21-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն պատասխանատու աուդիտորի վերաբերյալ տեղեկությունները:

2. «ԹՄ Աուդիտ» ՓԲԸ-ի կողմից ԿՏՀԲՄԾ-2026/1 և ԿՏՀԲՄԾ-2026/2 ծածկագրերով մրցույթներին մասնակցելու նպատակով ներկայացված մրցութային առաջարկները համապատասխանում են Որոշման Հավելվածի 39-րդ կետի պահանջներին:

3. «Թրասթ Աուդիտ» ՓԲԸ-ի կողմից ներկայացրած մրցութային առաջարկի անհամապատասխանության հանգամանքով պայմանավորված՝ նիստը հետաձգել երկու աշխատանքային օրով՝ առաջարկելով «Թրասթ Աուդիտ» ՓԲԸ-ին մինչև հետաձգման ժամկետի ավարտը՝ 2026 թվականի մարտի 18-ը, ժամը՝ 17:00-ն, շտկել անհամապատասխանությունները և կրկին ներկայացնել Հանձնաժողով:

4. Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների աուդիտի կազմակերպման նպատակով «Թրասթ Աուդիտ» ՓԲԸ-Ի կողմից ներկայացված ԿՏՀԲՄԾ-2026/1 և ԿՏՀԲՄԾ-2026/2 ծածկագրերով աուդիտորական կազմակերպությունների ընտրության բաց մրցույթների մրցութային առաջարկների անհամապատասխանության վերաբերյալ կայացնել որոշում:

5. Սույն որոշումն ուղարկել մրցութային առաջարկներ ներկայացրած աուդիտորական կազմակերպությունների էլեկտրոնային փոստի հասցեներին:

Մրցութային հանձնաժողովի նախագահ՝ **Լուիզա Սարգսյան**